**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**/2-րդ հանրային լսման/**

**Ալավերդի համայնքի կողմից Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր գերեզմանատան, ցանկապատման և օժանդակ շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

Սանահին բնակավայր «16» հոկտեմբերի 2025թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը:
- Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հ. Ձավարյանը:
- Սանահին բնակավայրի վարչական ղեկավար Ա. Սիմոնյանը:
- Ալավերդի համայնքի կողմից լիազոր անձ Ա.Ծատուրյանը, համայնքի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2025թ. հոկտեմբերի 16-ին ժամը 12:00-ին Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր գերեզմանատան, ցանկապատման և օժանդակ շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր գերեզմանատան, ցանկապատման և օժանդակ շինությունների կառուցման աշխատանքներ: նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2025 թվականի մարտի 24-ին, ժամը 12:00-ին Ալավերդի համայնքապետարանում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Այդ լսման արդյունքում 2025 թվականի մայիսի 16-ի N 88-Ա որոշմամբ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր գերեզմանատան, ցանկապատման և օժանդակ շինությունների կառուցման աշխատանքներ իրականացմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի համարում, հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ մանրամասը տեղեկատվությունը:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցան Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Հ. Ջավարյանը, Սանահին բնակավայրի վարչական ղեկավար Ա. Սիմոնյանը, բնակիչներ: Բոլոր ելույթ ունեցողները ողջունեցին նախատեսվող գործունեությանը՝ նշելով, որ հին գերեզմանոցը փակման եզրին է հետևաբար նորի կառուցումը անհրաժեշտ է բնակավայրի համար:

Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր գերեզմանատան, ցանկապատման և օժանդակ շինությունների կառուցման նախագիծը մանրամասն ներկայացրեց Ալավերդի համայնքի կողմից լիազոր անձ Ա.Ծատուրյանը:

Ալավերդի համայնքի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ մասնակիցների կողմից եղան հարցադրումներ: Հարցադրմանը տրվեց սպառիչ պատասխաններ:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային լսման մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

Ալավերդի համայնքի կողմից լիազոր անձ Արայիկ Ծատուրյան: